Հաստատում եմ

Նաիրի համայնքի ղեկավար

_____ Ն. Սարգսյան

<<27>> հունիս 2025թ.

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

<<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-25/3>>

1. Պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը. Նաիրիի համայնքապետարան, Հայաստանի Հանրապետություն, ք. Եղվարդ, Երևանյան 1:

2. Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը. Գնման առարկա է հանդիսանում Նաիրի համայնքի կարիքների համար Եղվարդ քաղաքի, Զովունի, Պառոշյան, Բուժական, Արագյուղ, Զորավան, Սարալանջ բնակավայրերում ոռոգման ցանցերի կառուցման աշխատանքների ձեռքբերումը: Գնման գործընթացն իրականացվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի համաձայն:

3. Հրավերը և դրանում կատարված փոփոխությունները. <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 06-ի թիվ 386-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային ձևով գնումների կատարման>> կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան կազմվել է հրավեր, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի ապրիլի 29-ին կայացած նիստում: Հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

4. Գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները. Գնման վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, պարզաբանումներ չեն ներկայացվել:

5. Հայտ ներկայացրած մասնակցի տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները.

<<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-25/3>> ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացվել է թվով ութ հայտ՝

Հ/հ	Հայտ ներկայացրած մասնակցի		
	անվանումը	էլեկտրոնային փոստի հասցեն	Տ/Փ-ի ստացականի հ/հ
1	<<ՑԵՆՏՐԱ ԿՈԼ>> ՍՊԸ	centra-kol@yandex.ru հեռ.093-55-04-05	000262293
2	<<Արտ Պլաս>> ՍՊԸ	artplas@inbox.ru հեռ. 098-00-02-04	000262304
3	<<ՍՈԼԻԴ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ	solidconsruction@mail.ru հեռ.098-50-50-40	000262305
4	<<Մեդիսոն Էյբլ>> ՍՊԸ	medison-eybl@mail.ru հեռ.093-00-79-09	000262307
5	<<ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ>> ՍՊԸ	mmvshingroup@mail.ru հեռ. 091-41-47-01	000262321
6	<<ԴԱՎԱՐՏ>> ՍՊԸ	davart2016@yandex.ru հեռ.099-04-33-66	000262334
7	<<Նատալի Շին >> ՍՊԸ և <<Արտաշատի էՑՇ>> ՍՊԸ կոնսորցիում	avetisyanazat82@gmail.com հեռ.098-16-07-66 s.arist@mail.ru հեռ. 077-92-25-22	000262343
8	<<ՊՐՈՖ ԲԻԼԴ>> ՍՊԸ և <<ԱՐՄ ՊԼԱՍՏ>> ՍՊԸ կոնսորցիում	Profbild20@gmail.com հեռ.093-80-66-08 info@armplast.am հեռ.093-60-10-06	000262345

6. Հայտով ներկայացված գները.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի կողմից առաջարկված գնային առաջարկը (ՀՀ դրամ), ընդ որում		
		Արժեք(ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1				
1	<<Արտ Պլաս>> ՍՊԸ	94 995 000	18 999 000	113 994 000
2	<<ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ>> ՍՊԸ	99 350 000	19 870 000	119 220 000
3	<<ՑԵՆՏՐԱ ԿՈԼ>> ՍՊԸ	100 000 000	20 000 000	120 000 000
4	<<ՊՐՈՖ ԲԻԼԴ>> ՍՊԸ և <<ԱՐՄ ՊԼԱՍՏ>> ՍՊԸ կոնսորցիում	100 500 000	22 100 000	132 600 000
5	<<Նատալի Շին >> ՍՊԸ և <<Արտաշատի էՑՇ>> ՍՊԸ կոնսորցիում	103 325 000	20 665 000	123 990 000
6	<<ԴԱՎԱՐՏ>> ՍՊԸ	108 330 000	21 666 000	129 996 000
7	<<Մեդիսոն Էյբլ>> ՍՊԸ	110 570 430	22 114 086	132 684 516
8	<<ՍՈԼԻԴ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ	127 610 000	25 522 000	153 132 000

7. Հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները. Հայտերը գնահատվել են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և հրավերով սահմանված կարգով, և գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2025 թվականի մայիսի 29-ի թիվ 2 որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվել.

8. Հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը. <<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-25/3>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտեր չեն մերժել:

9. Պայմանագիրը, իսկ գնման գործընթացի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

Չափաբաժին 1

2025 թվականի հունիսի 27- ին Պատվիրատու՝ Նաիրիի համայնքապետարանի, որը գտնվում է ք. Եղվարդ, Երևանյան 1 հասցեում, և Կապալառու՝ <<Արտ Պլաս>> ՍՊԸ -ի, որը գտնվում է գ. Շահումյան, Արցախի 5 հասցեում, միջև կնքվել է Նաիրի համայնքի Եղվարդ քաղաքի, Զովունի, Պռոշյան, Բուժական, Արագյուղ, Սարալանջ բնակավայրերում ոռոգման ցանցերի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման պայմանագիր N <<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-25/3>>:

Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 113 994 000 (մեկ հարյուր տասներեք միլիոն ինը հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամ:

10. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

11. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները. Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Վ. Վիրաբյան

(Կազմվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի համաձայն)